ԲԱՅԱԶԵՏ
ԿԵՆՏՐՈՆ

Ա.Դ.Սախարովի անվան
մարդու իրավունքների
պաշտպանության
հայկական կենտրոն ՀԿ



# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

# THE ROLE OF SPORTS SCHOOLS IN THE GEGHARKUNIK REGION IN THE PROCESSES OF PROMOTING HEALTHY LIFESTYLE AND SOCIALIZATION OF CHILDREN



# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Վերլուծական զեկույց

«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ

ԳԱՎԱՌ 2021

# THE ROLE OF SPORTS SCHOOLS IN THE GEGHARKUNIK REGION IN THE PROCESSES OF PROMOTING HEALTHY LIFESTYLE AND SOCIALIZATION OF CHILDREN

Analytical report

"Bayazet" Armenian Analytical-Research Center NGO

GAVAR 2021

*Սույն աշխատանքը Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների դերի, երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում ունեցող ազդեցության անդրադարձող առաջին փորձն է ժամանակակից հայ իրականության մեջ, որն իրականացվել է «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ-ի և «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղի համագործակցության շնորհիվ:*

*This work is the first attempt to reflect on the role of sports schools in the Gegharkunik region, the promotion of healthy lifestyles, and the impact on socialization processes in the modern Armenian reality, which was carried out thanks to the cooperation of the "Bayazet" Armenian Analytical-Research Center NGO and the Gegharkunik regional branch of "A.D. Sakharov Armenian Center for Human Rights" NGO.*

Հետազոտող հեղինակներ՝
Վահրամ Հովեյան, Վարդան Գարեյան

Թարգմանիչ՝
Զառա Պետրոսյան

Research authors:
Vahram Hoveyan, Vardan Gareyan

Translator:
Zara Petrosyan

Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Բովանդակությունը օգտագործելի և տարածելի է միմիայն պատշաճ կերպով հղում կատարելու պարտադիր պայմանով և ոչ առևտրային նպատակներով:
All rights reserved. Content may be used and disseminated only with the proper reference to non-commercial purposes.

Հղման նմուշ՝

Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների դերը երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում /«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ, Գավառ 2021թ.

The role of sports schools in Gegharkunik region in the processes of promoting healthy lifestyle and socialization of children / "Bayazet" Armenian Analytical-Research Center NGO., Gav

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ ........................................ 6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................ 8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ........................................ 11
Զեկույցում օգտագործված հիմնական հասկացությունները և դրանց մեկնաբանությունը ........................................ 11
ՄԱՍ1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ........................................ 14
1.1.Տեղեկության հավաքագրման մեթոդներ և ընտրանք ........................................ 16
1.2. Տվյալների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ ........................................ 21
ՄԱՍ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ........................................ 23
2.1.Մարզադպրոցներում երեխաների ներկայացվածության դինամիկան, հաճախելիության ցուցիչները, սեռատարիքային բաժանումը, բաշխվածությունն ըստ սպորտաձևերի և մրցաշարերի մասնակցության ցուցանիշները ........................................ 23
2.2. Մարզադպրոցներում ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանները, և հասանելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար ........................................ 34
2.3. Մարզադպրոցներ հաճախող և չհաճախող երեխաների առողջ ապրելակերպի և սոցիալականացման տարբերությունները ........................................ 42
ՄԱՍ 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ........................................ 50
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........................................ 55
Հավելված 1. Գեղարքունիքի մարզի համառոտ բնութագիրը ........................................ 57
Հավելված 2. . Հարցաթերթ ........................................ 66
Հավելված 3. Դիտարկման քարտ ........................................ 70
Հավելված 4. Հարցազրույցի ուղեցույց ........................................ 72

# CONTENT

A WORD OF GRATITUDE........................................................................................................................7

INTRODUCTION..............................................................................................................................10

THE PURPOSE AND OBJECTIVES OF THE RESEARCH..........................................................................12

The main concepts used in the report and their interpretation................ ........................................................12

PART 1. METHODOLOGY OF THE RESEARCH................................................... ................................15

1.1. Information gathering methods and sampling.........................................................................19

1.2. Additional, indirect data quality assessments.........................................................................21

PART 2. THE RESULTS OF THE RESEARCH..............................................................................29

2.1. Dynamics of children's representation in sports schools, attendance indicators, gender-age distribution, distribution by sports, and indicators of participation in tournaments................................ .......................29

2.2. Necessary conditions for physical education and sports in sports schools, and accessibility for children with disabilities.................................................................................................... ........................38

2.3. Differences in healthy lifestyles and socialization of children attending or not attending sports..........46

PART 3. CONCLUSIONS AND SUGGESTIONS.............................................................................53

LIST OF LITERATURE........................................................................................................................56

Appendix 1. Brief description of Gegharkunik region ........................................................................62

Appendix 2. Questionnaire..................................................................................................................68

Appendix 3. Observing card ..............................................................................................................71

Appendix 4. Guider of interview..........................................................................................................73

## ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

«Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների դերը երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում» հետազոտությունը հնարավոր դարձավ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի աջակցության շնորհիվ, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Գեղարքունիքի մարզի համայնքային մարզադպրոցներին և մասնավորապես՝

- Գավառի Գ. Աֆրոյանի անվան մարզադպրոցի տնօրեն Վանիկ Հովեյանին,
- Մարտունու քաղաքապետարանի Ս. Միերյանի անվան մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանին,
- Սևանի քաղաքապետարանի Ն. Ղազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Գարիկ Ավետիսյանին,
- Ճամբարակի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Վահագ Լազարյանին,
- Վարդենիսի քաղաքային մարզադպրոցի տնօրեն Արմեն Սիմոնյանին,

ինչպես նաև նշված մարզադպրոցների աշխատակիցներին՝ համագործակցության պատրաստակամության, օժանդակության և հարցազրույցներին մասնակցելու համար: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում սպորտի վաստակավոր վարպետ Վանիկ Սարգսյանին՝ մեզ ժամանակ տրամադրելու և հարցերին սիրով պատասխանելու համար:

Առանց մարզադպրոցների սաների հայտնած կարծիքների հնարավոր չէր լինի լիարժեք հետազոտություն իրականացնել, ուստի մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև նրանց:

Շատ շնորհակալ ենք «ԱԶԱՏ ԹՈՒԻՉՔ» սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամի տնօրեն Վոլոդյա Գափոյանին՝ հետազոտության ամբողջ ընթացքում մեր կողքին լինելու և կազմակերպչական հարցերում ցուցաբերած օգնության համար:

Հուսով ենք, որ այս հետազոտությունը ներդրում կլինի Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների և առհասարակ ՀՀ-ում սպորտի հանդեպ տարվող քաղաքականության զարգացման գործում: Հետազոտության բովանդակությունը, արտահայտված տեսակետներն ու կարծիքները պատկանում են «Բայազետ» կենտրոնին և հնարավոր է, որ չհամընկնեն Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տեսակետների հետ:

**«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ**

**Հուլիս, 2021**

## A WORD OF GRATITUDE

The research "The Role of Sports Schools in Gegharkunik Region in Promoting Healthy Lifestyle and Socialization of Children" became possible thanks to the support of the "A.D. Sakharov Armenian Center for Human Rights" NGO, for which we express our gratitude.

We also thank the community sports schools of the Gegharkunik region, in particular to:

- Vanik Hoveyan, Director of sports school after G. Aproyan in Gavar,
- Samvel Moseyan, Director of sports school after S. Mheryan of Martuni Municipality,
- Garik Avetisyan, Director of N. Dagaryan Children and Youth Sports School of Sevan Municipality,
- Vahag Lazaryan, Director of Chambarak Children and Youth Sports School,
- Armen Simonyan, Director of Vardenis city sports school,

as well as the employees of the mentioned sports schools for their willingness to cooperate, support and participate in interviews.

We especially thank the Honored Master of Sports, Vanik Sargsyan, for dedicating time and answering our questions cordially.

It would not have been possible to conduct complete research without the opinions expressed by the students of the sports schools, so we thank them as well.

We are very grateful to Volodya Gapoyan, Director of the “FREE FLIGHT” Socio-Economic Development Fund, for being with us throughout the research and supporting organizational matters.

We hope that this research will contribute to sports policy development in the Gegharkunik region and Armenia in general. The research content, the views expressed, and the opinions belong to the "Bayazet" center; they may not coincide with the views of the “A.D. Sakharov Armenian Center for Human Rights.”

**"Bayazet" Armenian Analytical-Research Center NGO**

**July 2021**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների ֆիզիկական դաստիարակությունը, առողջության պահպանման և ամրապնդման, սոցիալական ակտիվության դրսևորման ու ինքնարտահայտման, բարոյակամային որակների զարգացման հարցերը ժամանակակից հասարակությանը հուզող խնդիրներ են, ուստի ներառված են յուրաքանչյուր պետության կարևորագույն գործառույթներում:

ՀՀ-ում ևս երեխաների ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է պետական մակարդակով՝ սկսած նախադպրոցական ուսումնական հաստատություններից մինչև բարձրագույն կրթության ոլորտ: Այս կարևոր գործում իրենց անփոխարինելի դերն ունեն մարզադպրոցները: Մեր հանրապետությունում ներկայումս գործում են պետական և համայնքային մարզադպրոցներ:

2021թ.-ի դրությամբ Գեղարքունիքի մարզում գործում են թվով 6 համայնքային մարզադպրոցներ, որոնք գտնվում են մարզի քաղաքային համայնքներում՝ Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտն իր ակտիվ ու արդյունավետ դերն ունի մի շարք գործընթացներում, այդ թվում՝ անձի ներդաշնակ զարգացման և սոցիալականացման գործընթացներում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ-ի կողմից 2021թ. մայիս-հունիս ժամանակահատվածում իրականացվեց հետազոտություն, որի նպատակն էր վերլուծել, թե Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցները ի՞նչ դեր ունեն երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում:

Հետազոտությունն իրականացվել է մարզի հետևյալ հինգ համայնքային մարզադպրոցներում.

1. Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի մարզադպրոց,
2. Մարտունու Սմբատ Միերյանի անվան մարզադպրոց,
3. Սևանի Նորիկ Ղազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց,
4. Ճամբարակի մանկապատանեկան մարզադպրոց,
5. Վարդենիսի քաղաքային մարզադպրոց:

Հետազոտողները փորձել են մշակել գործնական տեղեկատվություն՝ ներկայացնելով եզրակացություններ և առաջարկություններ, որոնք կարող են օգտակար լինել.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը,
2. Գեղարքունիքի մարզպետարանին,
3. Գեղարքունիքի մարզի համայնքապետարաններին
4. Գեղարքունիքի մարզում գործող համայնքային մարզադպրոցներին

հետագա ոլորտային գործունեությունը, քաղաքականություններն ու ծրագրերը մշակելու գործընթացներում:

Նկատի ունենալով հետազոտության մարզային ընդգրկվածությունը՝ սույն հետազոտության մեջ հավելվածի տեսքով ներառվել է Գեղարքունիքի մարզի համառոտ բնութագիրը:

**INTRODUCTION**

The issues of children's physical education, maintenance, and strengthening of health, manifestation, and self-expression of social activity, development of moral qualities are issues of concern to modern society, so they are included in the most important functions of each state.

In RA, too, children's physical education is carried out at the state level, from pre-school educational institutions to the sphere of higher education. Sports schools have an irreplaceable role in this important matter. At present, there are state and community sports schools in our republic.

As of 2021, there are six community sports schools in the Gegharkunik region, located in the region's urban communities: Gavar, Sevan, Martuni, Vardenis և Chambarak.

Physical education and sports have an active and influential role in many processes, including the harmonious development and socialization of the person.

Considering those as mentioned earlier, "Bayazet" Armenian Analytical-Research Center NGO conducted a study in May-June 2021 to analyze the role of the sports schools in the Gegharkunik region in promoting healthy health lifestyle and socialization of children.

The research was conducted in the following five community sports schools of the region:

1. Grisha Vahan Aproyan Sports School of Gavar,
2. Smbat Mheryan Sports School of Martuni
3. Norik Dagaryan Children and Youth Sports School of Sevan,
4. Children and Youth Sports School of Chambarak,
5. City sports school of Vardenis.

Researchers have tried to develop practical information by presenting conclusions and suggestions that may be useful to:

1. the RA Ministry of Education, Science, Culture, and Sports,
2. the Municipality of Gegharkunik region,
3. the community administrations of the Gegharkunik region,
4. the community sports schools operating in the Gegharkunik region

in the process of developing further sectoral activities, policies, and programs.

Considering the regional coverage of the research, a brief description of the Gegharkunik region is included in the appendix of this study.

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Նպատակը**

Բացահայտել Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների դերը երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում:

**Խնդիրները**

1. Վեր հանել Գեղարքունիքի մարզի մարզադպրոցներում երեխաների ներկայացվածության դինամիկան, հաճախելիության ցուցիչները, սեռատարիքային բաժանումը (2019-2020), ինչպես նաև բաշխվածությունը ըստ սպորտաձևերի:
2. Բացահայտել Գեղարքունիքի մարզի մարզադպրոցներում ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիությունը, այդ թվում՝ սպորտաձևերի վարձավճարների դինամիկան (2019-2020), համայնք/բնակավայր-մարզադպրոց տրանսպորտի առկայությունը և մարզադպրոցների աշխատանքային գրաֆիկայի ճկունությունը:
3. Դիտարկել Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցներում ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանները (շենքային պայմաններ, վերանորոգվածություն, կահավորվածություն և այլն): Վեր հանել Գեղարքունիքի մարզի մարզադպրոցների հասանելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար (թեքահարթակների առկայություն, դռների անցանելիություն, հատուկ մարզական գույքի առկայություն և այլն):
4. Վերհանել 2019-2020 թթ.-ականների մարզադպրոցների սաների (երեխաների) միջազգային մրցաշարերի մասնակցության ցուցանիշները:
5. Բացահայտել Գեղարքունիքի մարզի մարզադպրոցներ հաճախող և չհաճախող երեխաների առողջ ապրելակերպի և սոցիալականացման տարբերությունները:

**Զեկույցում օգտագործված հիմնական հասկացությունները և դրանց մեկնաբանությունը**

1. *Երեխա* է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:[1]
2. *Երեխաների առողջ ապրելակերպը* դիտարկվում է, որպես առողջության պահպանմանն ուղղված վարքային սովորություններ կամ այդ նպատակներին ուղղված քայլեր[2]:
3. *Սոցիալականացումը*անձի՝ տվյալ հասարակության մեջ, ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է[3]:

[1]«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 1 ՀՕ-59 , 1996
[2]ԱղանյանԳ. Վ., ԿարապետյանՎ. Տ , «Առողջապրելակերպիդերնունշանակությունըհանրակրթականդպրոցում», http://ysu.am/files/11-1548141734-.pdf

## THE PURPOSE AND OBJECTIVES OF THE RESEARCH

### The purpose

Identify the role of sports schools in the Gegharkunik region in promoting healthy lifestyles and the socialization of children.

### The objectives

1. To highlight the dynamics of children's representation in sports schools of the Gegharkunik region, attendance indicators, gender-age distribution (2019-2020), and the distribution by sports.
2. Identify the availability of physical education and sports in the sports schools of the Gegharkunik region, including the dynamics of sports rents (2019-2020), the availability of community / settlement-sports transport, and the flexibility of the work schedule of the sports schools.
3. Consider the necessary conditions for children’s engagement in physical education in sports schools operating in the Gegharkunik region (building conditions, renovation, furnishing, etc.). Find out the accessibility of sports schools for children with disabilities in the Gegharkunik region (availability of ramps, passability of doors, availability of special sports equipment, etc.).
4. Find out the indicators of participation of sports schools students (children) in international tournaments in 2019-2020.
5. Identify the differences between the healthy lifestyle and socialization of children attending or not attending sports schools in the Gegharkunik region.

### The main concepts used in the report and their interpretation

1. Any person under the age of 18 is considered *a child*, except when they acquire legal capacity or are recognized as legal earlier[4].
2. *A healthy lifestyle of children* is behavioral habits aimed at maintaining health or steps towards those goals[5].
3. *Socialization* is a process of assimilating to social norms, values, and knowledge accepted by a person in a given society[6].

---

[3] Հակոբյան Ն Ռ Խաչատրյան Ա Գ, «Սոցիալականացումը որպես անձի արժեհամակարգի ձևավորման գործընթաց»,https://www.researchgate.net/publication/313377364_Socialakanacum_orpes_anji_arzehamakargi_jevavorman_gorcntac

[4] RA Law on the Rights of the Child, Article 1 HO-59, 1996

[5] Aghanyan G. V., KarapetyanV. T, "The meaning of healthy lifestyles in general education school", http://ysu.am/files/11-1548141734-.pdf:

[6] Hakobyan N.R , Khachatryan A. G, "Socialization as a process of formation of a person's value system", https://www.researchgate.net/publication/313377364_Socialakanacum_orpes_anji_arzehamakargi_jevavorman_gorcntac

# ՄԱՍ 1.
# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

# PART 1.
# METHODOLOGY OF THE RESEARCH

# ՄԱՍ1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք իրականացվում է որոշակի մեթոդաբանությամբ: Այս հետազոտությունը մեկնաբանողական է: Հետազոտության մեթոդաբանությունը կազմելիս սոցիոլոգիական տարբեր մոտեցումներից օգտագործվել են այն տարրերը, որոնք առավել համապատասխան են եղել հետազոտության նպատակին: Փորձ է արվել համադրել գոյություն ունեցող որակական և քանակական մեթոդները՝ ստանալով «խառը մեթոդներով» հետազոտություն: Յուրաքանչյուր մեթոդի միջոցով ստացված արդյունքները և հիմնական տվյալները համեմատվել, համակցվել և արտացոլվել են հետազոտության արդյունքների վերլուծության մեջ: Այսպիսի մոտեցումը թույլ է տվել ստանալ հնարավորինս օբյեկտիվ և համեմատելի քանակական տվյալներ, միաժամանակ դրանք բացատրել և լրացնել որակական տեղեկատվությամբ:

Հետազոտությունն իրականացվել է 4 եղանակներով՝

1. իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն,
2. որակական հարցազրույցներ,
3. դիտարկումներ,
4. քանակական հարցումներ:

Ընդհանուր թվով ուսումնասիրվել են 9 փաստաթղթեր: Անցկացվել են որակական 6 հարցազրույցներ Գեղարքունիքի մարզի մարզադպրոցների տնօրենների և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ: Համապատասխան դիտարկման քարտերի միջոցով դիտարկվել են 5 մարզադպրոցները: Իրականացվել են ընդհանուր թվով 80 հարցումներ մարզադպրոցներ հաճախող սաների շրջանում:

# PART 1. METHODOLOGY OF THE RESEARCH

Each research work is carried out according to a particular methodology. This research is interpretive. In compiling the research methodology, the elements that were most relevant to the purpose of the research were used from different sociological approaches. An attempt was made to combine the existing qualitative-quantitative methods by obtaining "mixed methods" research. The results obtained from each method and the primary data were compared, combined, and reflected in the analysis of the research results. Such an approach made it possible to obtain the most objective, comparable quantitative data, at the same time to explain and supplement them with qualitative information.

The research was conducted in 4 ways:

1. study of legal documents;
2. qualitative interviews,
3. observations
4. quantitative inquiries.

A total of 9 documents were studied. Six qualitative interviews were conducted with the directors of sports schools and physical education teachers of the Gegharkunik region. Five sports schools were observed through corresponding observing cards. A total of 80 surveys were conducted among students attending sports schools.

### 1.1. Տեղեկության հավաքագրման մեթոդներ և ընտրանք

Տեղեկատվության հավաքագրման առաջին մեթոդ է ընտրվել *փաստաթղթերի ուսումնասիրությունը*: Ուսումնասիրվել են այն հիմնական իրավական ակտերը, որոնցով կանոնակարգվում է հետազոտության ոլորտը *(Տե՛ս Գրականության ցանկ)*:

Տեղեկատվության հավաքագրման երկրորդ մեթոդ է ընտրվել *որակական կիսաձևայնացված հարցազրույցը*[7]*:* Այս մեթոդի շրջանականներում կազմվել է հիմնական բաց հարցերի ուղեցույց, և թվով 6 առանցքային տեղեկատուների[8] շրջանում անցկացվել են 40 րոպեից մինչև 1 ժամ 20 րոպե տևողությամբ հարցազրույցներ: Հարցազրույցները ձայնագրվել, ապա սղագրվել և ենթարկվել են մշակման *(Տե՛ս Հավելված 4.)*

Տեղեկատվության հավաքագրման երրորդ մեթոդ է ընտրվել *դիտարկումը*՝ նախապես կազմված դիտարկման քարտի միջոցով *(Տե՛ս Հավելված 3)*

Տեղեկատվության հավաքագրման չորրորդ և վերջին մեթոդ է ընտրվել *քանակական ստանդարտացված հարցաթերթով հարցումը*, որն իրականացվել է մարզադպրոցներ հաճախող թվով 80 սաների շրջանում *(Տե՛ս Հավելված 2.):*

Հարցման շրջանակներում կիրառվել է տիպային ներկայացուցչական ընտրանք, ընտրվել են Գեղարքունիքի մարզի թվով 6 համայնքային մարզադպրոցները արդյունքների վիճակագրական ներկայացուցչություն ապահովելու համար: Հարկ է ընդգծել, որ հետազոտության արդյունքները հանրապետության բոլոր մարզադպրոցների վրա տարածելու խնդիր ի սկզբանե չի հետապնդվել:




Հարցվածների մեջ մեծամասնություն են կազմում արական սեռի ներկայացուցիչները՝ մոտ 83%, ինչը պատահական չէ և ուղղակիորեն կապված է մարզադպրոցներում ընդհանուր առմամբ իգական սեռի մարզիկների նվազ ներկայացվածության հետ *(տե՛ս գծապատկեր 1. Ընտրանքի բաշխումն ըստ սեռի)*:

[7] semi-structured interview
[8] Որպես առանցքային տեղեկատուներ են ընտրվել Գեղարքունիքի մարզադպրոցների և կրթական հաստատությունների սպորտի գծով ներկայացուցչները:

Հարցվողների 64%-ը 14-17 տարեկան են, ինչը հետազոտության տեսանկյունից էական նշանակություն ունի, քանի որ ի սկզբանե ենթադրվում էր, որ հարցումներն այդ տարիքի երեխաների շրջանում առավելագույն արդյունավետություն կապահովեն։ 10-13 և 6-9 տարեկանները հարցման արդյունքում ունեցան համապատասխանաբար 26% և 10% ներկայացվածություն *(տե՛ս գծապատկեր 2. Ընտրանքի բաշխումը ըստ տարիքի)*։







Հարցմանը ներգրավված երեխաների մեծամասնությունը քաղաքային բնակավայրերից են (96%), իսկ գյուղական բնակավայրերից հարցումներին մասնակցելեն հարցվողների մոտ 4%-ը։ Այսպիսի արդյունքը կարելի է բացատրել նրանով, որ մարզադպրոցներ հաճախող երեխաների զգալի մասը քաղաքային բնակավայրերից են *(տե՛ս գծապատկեր 3. Ընտրանքի բաշխումն ըստ բնակավայրերի տեսակի)*։

Հարցման մասնակիցների զգալի մասը հաճախում է ֆուտբոլի (29%): Մնացած մասը՝ բացի թենիս սպորտաձևի հաճախողներից (8%), գրեթե հավասարաչափ զբաղվում են վոլեյբոլ, կարատե, ծանրամարտ, ըմբշամարտ և բռնցքամարտ սպորտաձևերով՝ (13-14%) *(տե՛ս գծապատկեր 4. Ընտրանքի բաշխումն ըստ սպորտաձևերի)*



## 1.1. Information gathering methods and sampling

The first method of gathering information was to study the documents. The main legal acts that regulate the field of research have been reviewed *(See List of Literature).*

A qualitative *semi-formalized interview*[9] was chosen as the second method of gathering information. Within this method, a guide to key open-ended questions was developed, and interviews lasting from 40 minutes to 1 hour and 20 minutes were conducted among six key informants[10]. Interviews were recorded, then transcribed and edited *(See Appendix 4).*

The third method of gathering information was monitoring using a pre-compiled monitoring card *(See Appendix 3).*

The fourth and final data collection method was the quantitative standardized questionnaire conducted among 80 students attending sports schools *(See Appendix 2).*

Within the survey framework, a typical representative sample was used - six community sports schools of the Gegharkunik region were selected to ensure statistical representation of the results. It should be emphasized that disseminating the research results to all sports schools in the country was not initially pursued.

FIGURE 1. SAMPLING BY GENDER




The majority of respondents are male - about 83%, which is not accidental and is directly related to the low representation of female athletes in sports in general (see Figure 1. Sampling by gender).

[9] semi-structured interview
[10] The representatives of Gegharkunik sports schools and educational institutions were selected as key informants.

64% of the respondents are 14-17 years old, which is significant from the research point of view. It was initially assumed that the surveys would provide maximum effectiveness among children of that age. The 10-13 and 6-9-year-olds had 26% and 10% representation, respectively. (see Figure 2. Sampling distribution by age).







The majority of children surveyed are from urban areas (96%), and about 4% of respondents from rural areas participated in the survey. This result can be explained by the fact that the majority of children attending sports schools are from urban areas (see Figure 3. Sampling distribution by settlement type).

Most of the respondents attend football classes (29%). The rest, except for those who attend tennis (8%), are almost equally involved in volleyball, karate, weightlifting, wrestling, and boxing classes (13-14%) (see Figure 4. Sampling distribution by sports).



**1.2. Տվյալների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ**

Հարցազրույցների ավարտից հետո՝ դրանց ընթացքի և հարցվածների մասին զրուցավարների կողմից կատարված նշումները թույլ են տվել պարզել, որ՝

- հարցվածների գրեթե 80%-ը ցուցաբերել է հետաքրքրվածություն,
- հարցվածների գերակշիռ մեծամասնության վերաբերմունքը կարելի է որակել անկեղծ,
- հարցերը պարզաբանելու խնդրանքով դիմել է հարցվածների ընդամենը 7%-ը:

**1.2. Additional, indirect data quality assessments**

At the end of the interviews, the interviewers' notes on their progress and the respondents made it possible to find out that:

• almost 80% of respondents showed interest;

• the attitude of the vast majority of respondents can be described as sincere;

• only 7% of respondents asked to clarify the questions.

# ՄԱՍ 2.
# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

# PART 2.
# THE RESULTS OF THE RESEARCH

### 2.1. Մարզադպրոցներում երեխաների ներկայացվածության դինամիկան, հաճախելիության ցուցիչները, սեռատարիքային բաժանումը, բաշխվածությունն ըստ սպորտաձևերի և մրցաշարերի մասնակցության ցուցանիշները

«Գեղարքունիքի մարզում գործող մարզադպրոցների դերը երեխաների առողջ ապրելակերպի խթանման և սոցիալականացման գործընթացներում» հետազոտության շրջանակներում կարևոր էր վերհանել համայնքային մարզադպրոցների նկարագիրը: Այն ներառում է մարզադպրոցներում սաների (երեխաների) ներկայացվածության դինամիկան, հաճախելիության ցուցիչները, սեռատարիքային բաժանումը, բաշխվածությունն ըստ սպորտաձևերի, միջազգային և տեղական մրցաշարերի մասնակցության ցուցանիշները:

2019-2020թթ. Գեղարքունիքի մարզի համայնքային մարզադպրոցներ հաճախող երեխաների թիվը փոքր-ինչ անկում է ապրել՝ 979-ից դառնալով 911 (*տե՛ս գծապատկեր 5. Մարզադպրոցների երեխաների քանակը):* Ըստ մարզադպրոցների ներկայացուցիչների՝ պատճառը COVID-19 համաճարակն է, որի պատճառով գրանցվել է նաև մարզիկների բացակայությունների թվաքանակի աճ:



Ինչ վերաբերում է մարզադպրոցների սպորտային խմբակներում երեխաների ներկայացվածությանը, ապա 2019-2020թթ.-ի ընթացքում դրանց համամասնությունն էապես չի փոխվել (*տե՛ս Գծապատկեր 6. Գեղարքունիքի մարզում գործող համայնքային մարզադպրոցների երեխաների բաշխվածությունն ըստ սպորտաձևերի):* Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, մարզում ամենատարածված մարզաձևերը հանդիսանում են ֆուտբոլը և ըմբշամարտը, որոնցով զբաղվողների քանակը 2020 թվականի դեկտեմբերի դրությամբ համապատասխանաբար եղել է 178 և 167:

Գծապատկեր 6. Գեղարքունիքի մարզում գործող համայնքային մարզադպրոցների երեխաների բաշխվածությունն ըստ սպորտաձևերի




Գավառի մարզադպրոցում գործում են սպորտային 8 խմբակներ: 2020 թվականի դեկտեմբերի դրությամբ մարզիկների թվով շարունակում է գերիշխել ֆուտբոլ մարզաձևը՝ 56 սան: Մարզադպրոցում բազկամարտի խմբակ հաճախողների թիվը 32 է, կարատեինը՝ 30, բռնցքամարտինը՝ 29, ըմբշամարտինը՝ 28, բասկետբոլինը՝ 24, եռամարտինը՝ 11, իսկ նվազագույն քանակի մարզիկները ծանրամարտ սպորտաձևում են՝ 2: *(տե՛ս գծապատկեր 7. Գավառի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի):*

Գծապատկեր 7. Գավառի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի




Գեղարքունիքի մարզի համայնքային մարզադպրոցներից Սևանի մարզադպրոցում գործում են սպորտային ամենաշատ խմբակները՝ թվով 11: 2020թ. դեկտեմբերի դրությամբ մարզիկների թվով գ երիշխել է ֆուտբոլ մարզաձևը՝ 56 սան: Մարզադպրոցում թաեքվանդոյի խմբակ հաճախողների թիվը 55 է, բռնցքամարտինը՝ 51, ըմբշամարտինը՝ 36, եռամարտինը և վոլեյբոլինը՝ 28-ական, քիքբոքսինգի խմբակ հաճախողները 25-ն են, ծանրամարտինը և ազգային կոխինը միասին՝ 22: Ի տարբերություն մյուս մարզադպրոցների՝ Սևանի մարզադպրոցում գործում են շախմատի 28 հոգանոց և սեղանի թենիսի 9 հոգանոց խմբակներ: (*տե՛ս գծապատկեր 8. Սևանի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի)*:

Գծապատկեր 8. Սևանի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի



Գծապատկեր 9. Մարտունու մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի




Մարտունու մարզադպրոցում գործում են սպորտային 7 խմբակներ: 2020 թ. դեկտեմբերի դրությամբ մարզիկների թվով շարունակում է գերիշխել ֆուտբոլ մարզաձևը՝ 66 սան: Բռնցքամարտի խմբակ հաճախող մարզիկների թիվը 24 է, բասկետբոլինը՝ 24, ըմբշամարտ, կարատե և կռիվ սպորտաձևերի խմբակներ հաճախում են 20-ական երեխաներ: Նվազագույն քանակի մարզիկները կռիվ սպորտաձևում են՝ շուրջ 8: (*տե՛ս գծապատկեր 9. Մարտունու մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի*):

Գծապատկեր 10. Վարդենիսի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի




Վարդենիսի մարզադպրոցում գործում են սպորտային 2 խմբակներ՝ ըմբշամարտ և կարատե: Մարզիկների թվով գերակշռում է ըմբշամարտ սպորտաձևը՝ 99 սան, իսկ կարատեով զբաղվողների թիվը հասնում է 55-ի (*տե՛ս գծապատկեր 10. Վարդենիսի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի):*

Ճամբարակ մարզադպրոցում գործում են սպորտային 2 խմբակներ՝ վոլեյբոլ և ձյուդո: Մարզիկների թվով գերակշռում է ձյուդո մարզաձևը՝ 30 սան, իսկ վոլեյբոլով զբաղվողների թիվը հասնում է 15-ի (*տե՛ս գծապատկեր 11. Ճամաբարակի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի*):

Գծապատկեր 11. Ճամբարակի մարզադպրոցի երեխաների բաշխումն ըստ սպորտաձևերի




Մարզադպրոցների գործունեության անդրադառնալիս կարևոր էր ուշադրություն դարձնել մարզական մրցումների մասնակցության դինամիկային, քանզի մրցաշարերն էական նշանակություն ունեն մարզադպրոց հաճախող երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացման, մարզումների վերջնական արդյունքների, հուզական ապրումների, լարվածության դրսևորումների, և մեծ հաշվով՝ նաև սոցիալականացման գործընթացների վրա:

Գծապատկեր 12. 2019-2020 թվականներին մրցաշարերի մասնցակցած մարզիկների քանակը



Ուսումնասիրելով Գեղարքունիքի մարզի համայնքային մարզադպրոցների կողմից ՀՀ-ում տեղի ունեցող մրցաշարերի մասնակցության թվերը և վերլուծելով անցկացված հարցազրույցները, կարելի է նշել, որ ՀՀ-ում տեղի ունեցող մարզական մրցաշարերին մարզադպրոցների նվազ մասնակցությունը գլխավորապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների բացակայությամբ: Խոսքը հիմնականում մայրաքաղաք Երևանից ավելի հեռու գտնվող մարզադպրոցների մասին է (Ճամբարակ, Վարդենիս և Մարտունի): Նկատենք նաև, որ համայնքապետարանները երբեմն աջակցում են մարզադպրոցներին տրանսպորտի տրամադրման հարցում: Հարկ է նշել, որ մարզի համայնքային մարզադպրոցներից միայն Գավառի մարզադպրոցում են սահմանված վարձավճարներ՝ գործող բոլոր խմբակների համար, մյուս մարզադպրոցներում բոլոր խմբակներն անվճար են:

# PART 2. THE RESULTS OF THE RESEARCH

## 2.1. Dynamics of children's representation in sports schools, attendance indicators, gender-age distribution, distribution by sports, and indicators of participation in tournaments.

Within the research framework "The Role of Sports Schools in Gegharkunik Region in Promoting Healthy Lifestyle and Socialization of Children," it was essential to reveal the description of community sports schools. It includes the dynamics of the representation of students (children) in sports schools, attendance indicators, gender-age distribution, distribution by sports, indicators of participation in international and local tournaments.

In 2019-2020, the number of children attending community sports schools in the Gegharkunik region decreased slightly from 979 to 911 *(see Figure 5. Number of children in sports schools).* According to the representatives of sports schools, the reason is the COVID-19 epidemic, due to which an increase in the number of absences of athletes has been registered.

Figure 5. Number of children in sports schools




As for the representation of children in sports clubs of sports schools, their proportion has not changed significantly during 2019-2020 *(see Figure 6. Distribution of children in community sports schools in Gegharkunik region by sports).* As shown in Figure 6, the most popular sports in the region are football and wrestling, the number of which as of December 2020 was 178 and 167, respectively.

**Figure 6. Distribution of children in community sports schools in Gegharkunik region by sports**




There are eight sports clubs in Gavar sports school. As of December 2020, the football sport continues to dominate in the number of athletes - 56 students. The number of people attending the arm wrestling club at the sports school is 32, karate - 30, boxing - 29, wrestling - 28, basketball - 24, triathlon - 11, and the minimum number of athletes in weightlifting is 2 *(see Figure 7. Distribution of Gavar Sports School children by sports).*

**Figure 7. Distribution of Gavar Sports School children by sports**



Among the community sports schools of the Gegharkunik region, Sevan Sports School has the largest number of sports clubs - 11. As of December 2020, the number of athletes was dominated by football - 56 students. The number of participants in the taekwondo club is 55, boxing - 51, wrestling - 36, triathlon - volleyball - 28, kickboxing - 25, weightlifting, and national kokh together - 22. Unlike other sports schools, Sevan Sports School has 28 chess and 9 table tennis clubs. *(See Figure 8. Distribution of Sevan Sports School children by sport).*

**Figure 8. Distribution of Sevan Sports School children by sport**




**Figure 9. Distribution of Martuni Sports School Children by Sports**




There are 7 sports clubs in Martuni sports school. As of December 2020, the number of athletes continues to dominate in football classes - 66 students. The number of athletes attending a boxing club is 24, basketball - 24, and 20 children attend each wrestling, karate, and kokh sports club. The minimum number of athletes in kokh sports is about 8 (*See Figure 9. Distribution of Martuni Sports School Children by Sports).*

**Figure 10. Distribution of Vardenis Sports School children by sports**




There are 2 sports clubs in Vardenis sports school: wrestling and karate. The predominant number of athletes is wrestling - 99 students and the number of karate practitioners reaches 55 *(see Figure 10. Distribution of Vardenis Sports School children by sports).*

There are two sports clubs in Chambarak sports school: volleyball and judo. Judo dominates with the number of athletes - 30 students and the number of volleyball players reaches 15 *(see Figure 11. Distribution of children in Chambarak Sports School by sport).*

**Figure 11. Distribution of children in Chambarak Sports School by sport**



When referring to the activities of sports schools, it was important to pay attention to the dynamics of participation in sports competitions. Tournaments are essential for the physical and mental development of children attending sports schools, the final results of training, emotional feelings, stress, and, to a large extent, socialization processes

Figure 12. Number of athletes who participated in the tournaments in 2019-2020




Examining the figures of tournaments participation of community sports schools of the Gegharkunik region held in Armenia and analyzing the interviews conducted, it can be noted that the low participation is mainly due to the lack of means of transportation. We are primarily talking about sports schools farther from Yerevan (Chambarak, Vardenis, and Martuni). It should also be noted that municipalities sometimes assist sports schools in providing transportation. It should be noted that out of the community sports schools of the region, only in Gavar sports school there are fees for all the operating clubs, in other sports schools all the clubs are free.

### 2.2. Մարզադպրոցներում ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանները, և հասանելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար

Մարզադպրոցներում երեխաների մարզական արդյունքների, սոցիալական ակտիվության դրսևորման ու ինքնարտահայտման, բարոյակամային որակների զարգացման, ինչպես նաև մարզադպրոցի ողջ աշխատանքի որակի վրա ազդում են միջավայրային գործոնները և պայմանները: Մարզադպրոցների ֆիզիկական պայմանները, ինչպես օրինակ՝ սանիտարահիգիենիկ վիճակը, ենթակառուցվածքների առկայությունը և որակը, մարզադպրոցի ներքին հարդարանքը, անուղղակի ազդեցություն ունեն կրթադաստիարակչական արդյունավետ միջավայր ապահովելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հետազոտության շրջանակներում դիտարկվել է, թե մարզի համայնքային մարզադպրոցներում արդյոք առկա են անհրաժեշտ պայմաններ ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար: Կարևորվել են հատկապես հետևյալ բաղադրիչները՝

1) մարզադպրոցների հարակից տարածքների վիճակը, հետիոտնային անցումները,
2) մարզադպրոցների շենքային պայմանները՝ վերանորոգվածություն, կահավորվածություն և այլն,
3) մարզադպրոցների հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Վերոնշյալ պայմանների դիտարկման նպատակով մշակվել են 15 չափորոշիչներ, որոնցից յուրաքանչյուրի գնահատման համար սահմանվել է 0-5 բալանոց միջակայք, ինչը նշանակում է, որ 0-ի դեպքում՝ առկա չէ, իսկ առավելագույն 5 միավորի դեպքում՝ գերազանց վիճակում է: Քանի որ դիտարկվել են 15 չափորոշիչներ, արդյունքում դիտարկման առավելագույն միավորների հանրագումարը 75 է:

Դիտարկման արդյունքները թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել հետազոտված մարզադպրոցներում ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու համար պայմանների մասին (*տե՛ս աղյուսակ 1. Դիտարկման արդյունքները*):

Ստորև ներկայացվում են նաև յուրաքանչյուր մարզադպրոցի դիտարկման և կատարված գնահատման վերաբերյալ նկատառումներ:

Աղյուսակ 1. Դիտարկման արդյունքները

| № | Չափորոշիչ | Դիտարկման գնահատական | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *Գավառի մարզադպրոց* | *Վարդենիսի մարզադպրոց* | *Սևանի մարզադպրոց* | *Մարտունու մարզադպրոց* | *Ճամբարակի մարզադպրոց* |
| 1 | Մարզադպրոց տանող ճանապարհների վիճակը | 4 | 3 | 4 | 3 | 4 |
| 2 | Հետիոտնային անցումներ դպրոցի մոտակա կանգառում *(մատչելիությունը սայլակ օգտագործող կամ կույր անձանց համար, հետիոտնային նախազգուշական գործառույթ կատարող շոշափողական (տակտիլ) միջոցներ)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 3 | Մարզադպրոցի հարակից կանաչ տարածության առկայությունը, վիճակը | 1 | 0 | 1 | 0 | 2 |
| 4 | Շենքի ընդհանուր վիճակը դրսից *(մաքուր տեսք, սալիկներ, աղբամանների առկայություն և այլն)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 5 | Շենքի ընդհանուր վիճակը ներսից *(պատուհաններ, պատեր, աստիճաններ, միջանցքների լուսավորությունը, անցանելի դռներ, կրակմարիչներ և այլն)* | 4 | 3 | 3 | 2 | 1 |
| 6 | Ջեռուցման համակարգի առկայությունը, վիճակը | 5 | 5 | 1 | 4 | 3 |
| 7 | Սանհանգույց *(սեռային տարբերակվածություն, ցնցուղարան, լվացարաններ, օճառ, սրբիչ, հոսող ջուր և այլն)* | 3 | 2 | 2 | 2 | 0 |
| 8 | Հանդերձարաններ *(օդափոխանակություն, պահարաններ, մաքրությունը, կոկիկ տեսքը, կախիչների քանակը)* | 3 | 2 | 2 | 2 | 1 |
| 9 | Մարզադահլիճի առկայությունը, վիճակը | 5 | 3 | 4 | 2 | 2 |
| 10 | Ընդունարանի առկայությունը, վիճակը | 4 | 2 | 2 | 2 | 1 |
| 11 | Բուժկետ *(սենյակի ընդհանուր որակը, մաքրությունը, բժշկական նյութերի հասանելիությունը, մասնագետի առկայությունը)* | 4 | 4 | 2 | 0 | 1 |
| 12 | Լողավազանի առկայություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Մարզականգույք *(առկա սպորտաձևերի համապատասխանությամբ)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 14 | Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված մարզական գույքի առկայություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Թեքահարթակների առկայություն | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ***Ընդհանուր գնահատականը*** | **45** | **33** | **30** | **26** | **24** |

Դիտարկման պահին **Գավառի մարզադպրոցը** գտնվում էր հիմնանորոգման ավարտական փուլում, որով և պայմանավորված է դիտարկման համեմատական բարձր գնահատականը: Դեպի մարզադպրոց տանող ճանապարհին առկա է հետիոտնային անցում՝ գծանշանով և ցուցականակով: Մարզադպրոցի շենքային պայմանները, վերանորոգվածությունը և կահավորվածությունը հիմնականում գնահատվել են բարձր միավորներով: Առկա է ջեռուցման համակարգ, որն ապահովում է ամբողջ շենքի ջեռուցումը: Մարզադպրոցի երեխաները հնարավորություն ունեն օգտվելու Գավառում գործող միջհամայնքային կանոնավոր տրանսպորտից, ինչն էլ ավելի է հեշտացնում Գավառի մարզադպրոց հաճախելու գործընթացը: Սակայն, չնայած դրան, Գավառի մարզադպրոցում դեռ առկա են խնդիրներ կանաչ տարածության ընդլայնման, սանհանգույցների և հանդերձարանների պայմանների բարելավման առումով: Մարզադպրոցը չունի լողավազան և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված որևէ հարմարություն կամ գույք:

Ուսումնասիրության ավարտին պարզ դարձավ, որ լողավազաններ և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ բացակայում են մարզի բոլոր 5 մարզադպրոցներում:

Դիտարկման արդյունքում գնահատման միջինից ցածր միավորներ տրվեցին Վարդենիսի, Սևանի և Մարտունու մարզադպրոցներին:

**Վարդենիսի** մարզադպրոցը տանող ճանապարհների վիճակը գնահատվել է բավարար, առկա են հետիոտնային անցումներ դպրոցի մոտակա կանգառում: Մարզադպրոցի սանհանգույցը, հանդերձարանները և բուժկետը գտնվում են ոչ բարվոք վիճակում: Մարզադպրոցի հարակից տարածքը չունի կանաչապատված հատված:

**Սևանի** մարզադպրոցը շենքի ընդհանուր վիճակը՝ ներքին և արտաքին տեսքը գնահատվել է բավարար, առկա են հետիոտնային անցումներ դպրոցի մոտակա կանգառում: Մարզադպրոցը չունի միասնական ջեռուցման համակարգ, սանհանգույցը և հանդերձարանները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Մարզադպրոցի հարակից տարածքը չունի կանաչապատված հատված:

**Մարտունու** մարզադպրոց տանող ճանապարհների վիճակը գնահատվել է բավարար, առկա են հետիոտնային անցումներ դպրոցի մոտակա կանգառում: Մարզադպրոցի սանհանգույցը և հանդերձարանները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Մարզադպրոցը չունի բուժկետ: Այստեղ ևս մարզադպրոցի հարակից տարածքը չունի կանաչապատված հատված:

Դիտարկված մարզադպրոցներից գնահատման համեմատաբար ցածր միավոր տրվեցին **Ճամբարակի** մարզադպրոցին: Շենքի ընդհանուր ներքին տեսքը գնահատվեց ոչ բավարար: Տարիներ շարունակ խոնավության պատճառով հատակը և պատերը անմխիթար վիճակում են: Մարզադպրոցում չկան սանհանգույցներ, հանդերձարաններ, ընդունարան, իսկ հարակից տարածքը բավարար չափով կանաչապատված չէ:

Սույն հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև մոտակա բնակավայրերի համար մարզադպրոցների մատչելիությանը, համայնք/բնակավայր-մարզադպրոց հանրային տրանսպորտի առկայության և մարզադպրոցների աշխատանքային գրաֆիկայի համապատասխանության հարցերին:

Այսպիսով, ելնելով դիտարկման արդյունքներից՝ կարող ենք նշել.

- մարզադպրոցների շենքերը հիմնականում հին են և խոնավ, ունեն կանոնավոր ջրամատակարարման և սանհանգույցների օդափոխության խնդիրներ,
- մարզում հիմնանորոգվում է միայն Գավառի մարզադպրոցը, ինչն իրականացվում է բարերարների հովանավորությամբ,
- մարզադպրոցների շենքերը հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, չունեն համապատասխան մարզագույք, մուտքի և ելքի համար նախատեսված հարմարություններ, որոշ մարզադպրոցներ, իրենց ճարտարապետական լուծումների առանձնահատկություններից ելնելով, նույնիսկ չունեն համապատասխան հարմարություններ հետագայում դրանցում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովելու համար,
- մարզադպրոցները չունեն լողավազաններ, ինչի արդյունքում լողը՝ որպես մարզաձև, ներառված չէ ուսուցանվող սպորտաձևերում,
- ներհամայնքային և ներմարզային հասարակական տրանսպորտային երթուղիները բավարար չեն գյուղերից դեպի մարզկենտրոն կամ մարզի մյուս քաղաքներ տեղաշարժի կազմակերպման համար:

## 2.2. Necessary conditions for engaging in physical education and sports in sports schools, and accessibility for children with disabilities

Environmental factors and conditions affect children's sports results, sports activity, self-expression, development of moral qualities, and the quality of the whole school work in sports schools. The conditions of the sports schools, such as the sanitary condition, the availability, and quality of the infrastructure, the interior decoration, have an indirect impact on ensuring an effective educational environment.

Considering those as mentioned above, within the research framework, it was observed whether the community sports schools of the region have the necessary conditions for engaging in physical education and sports. The following components were used in particular:

1) the condition of the adjacent areas of sports schools, pedestrian crossings;

2) building conditions of sports schools: renovation, furnishing, etc.

3) adaptation of sports schools for children with disabilities.

Fifteen criteria have been developed to observe the mentioned conditions, a range of 0-5 points set for each. 0 means it is not available, and the maximum 5 points mean it is in excellent condition. As 15 criteria were observed, the sum of the maximum monitoring points is 75.

The observation results provide an overview of the conditions for engaging in physical education and sports in the surveyed sports schools *(see Table 1 . The results of observation).*

Below are also considerations regarding the monitoring and evaluation of each sports school.

## Table 1.The results of observation:

| № | Criterion | Observation mark | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Gavar sports school | Vardenis sports school | Sevan sports school | Martuni sports school | Chambarak sports school |
| 1 | The condition of the roads leading to the sports school | 4 | 3 | 4 | 3 | 4 |
| 2 | Pedestrian crossings at the nearest school bus stop *(accessibility for wheelchair users or blind people, tactile means for pedestrian warning)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 3 | Existence of green space near the sports school, condition | 1 | 0 | 1 | 0 | 2 |
| 4 | General condition of the building from the outside *(clean look, tiles, garbage cans, etc.)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 5 | General condition of the building from the inside *(windows, walls, stairs, corridor lighting, sliding doors, fire extinguishers, etc.)* | 4 | 3 | 3 | 2 | 1 |
| 6 | Availability of heating system, condition | 5 | 5 | 1 | 4 | 3 |
| 7 | Bathroom *(gender difference, shower, sinks, soap, towel, toilet, etc.)* | 3 | 2 | 2 | 2 | 0 |
| 8 | Wardrobes (*ventilation, cabinets, cleanliness, neat appearance, number of hangers)* | 3 | 2 | 2 | 2 | 1 |
| 9 | Availability and condition of the gym | 5 | 3 | 4 | 2 | 2 |
| 10 | Availability of reception, condition | 4 | 2 | 2 | 2 | 1 |
| 11 | Medical center *(general quality of the room, cleanliness, availability of medical supplies, availability of a specialist)* | 4 | 4 | 2 | 0 | 1 |
| 12 | Availability of a swimming pool | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Sports equipment *(according to available sports)* | 4 | 3 | 3 | 3 | 3 |
| 14 | Availability of sports equipment for children with disabilities | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 15 | Existence of ramps | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | ***Overall mark:*** | **45** | **33** | **30** | **26** | **24** |

At the time of the observation, Gavar sports school was in the final stage of renovation, which is the reason for the relatively high rating of the observation. On the way to the sports school, there is a pedestrian crossing with a sign and a list. The building conditions, renovation, and furnishing of the sports school were mainly evaluated with high scores. There is a heating system, which provides heating of the whole building. The children of the sports school can use the regular inter-community transport in Gavar, making attending the Gavar sports school even more accessible. However, Gavar sports school still has problems in expanding the green space and improving the conditions of bathrooms and locker rooms. The sports school does not have a swimming pool and any facilities or property for people with disabilities.

At the end of the study, it became clear that swimming pools and facilities for people with disabilities are missing in all five sports schools in the region. As a result of the observation, Vardenis, Sevan, and Martuni sports schools were given lower than average scoring points.

The condition of the roads leading to **Vardenis sports school** was assessed as satisfactory. There are pedestrian crossings at the school's nearest bus stop. The bathroom, locker rooms, and medical center of the sports school are not in good condition. The area adjacent to the sports school does not have a green area.

The general condition of the **Sevan sports school** building, interior, and exterior was assessed as satisfactory. There are pedestrian crossings at the nearest school bus stop. The sports school does not have a unified heating system, the bathroom and locker rooms are not in good condition. The area adjacent to the sports school does not have a green area.

The condition of the roads leading to **Martuni sports school** was assessed as satisfactory. There are pedestrian crossings at the nearest bus stop of the school. The bathroom and locker rooms of the sports school are not in good condition. The sports school does not have an aid station. Here, too, the area adjacent to the sports school does not have a green area.

The **Chambarak sports school** was given a relatively low evaluation point out of the observed sports schools. The general interior of the building was assessed as unsatisfactory. The floor and walls have been in deplorable condition for years due to the humidity. There are no bathrooms, locker rooms, reception in the sports school, and the adjacent area is not green enough.

Within the framework of this research, reference was also made to the availability of sports schools for nearby settlements, the availability of public transport / community-settlement-sports schools, and the adequacy of the work schedule of sports schools.

Thus, based on the results of the observation, we can note:

- Sports school buildings are mostly old and damp, have problems with a regular water supply and bathroom ventilation;

- Only Gavar sports school is being renovated in the region, which is carried out under the auspices of benefactors.

- Sports school buildings are not adapted for people with disabilities. They do not have adequate sports equipment, entrance, and exit facilities. Due to the peculiarities of their architectural solutions, some sports schools do not even have proper facilities to provide access and exit for people with disabilities.

- Sports schools do not have swimming pools, as a result of which swimming as a sport is not included in the taught sports;

- Intra-community and intra-regional public transport routes are not sufficient to organize movement from villages to the regional center or other cities in the region.

## 2.3. Մարզադպրոցներ հաճախող և չհաճախող երեխաների առողջ ապրելակերպի և սոցիալականացման տարբերությունները

Հետազոտության շրջանակներում մարզադպրոցների ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցները երեխաների սոցիալականացման գործընթացներում մարզադպրոցների դերի մասին ի հայտ բերեցին տարբեր կարծիքներ ու ըմբռնումներ: Այդ ամենը ավելի պատկերավոր է դառնում, երբ դրանք համադրում ենք մարզադպրոցի երեխաների հետ անցակցված հարցումների պատասխանների հետ:

Երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցող գործոնների շարքին են դասվում ֆիզկուլտուրան և սպորտը: Դեռահասության տարիքում մարզադպրոց հաճախելն ազդում է ոչ միայն երեխաների ֆիզիկական առողջության ամրապնդման վրա, այլ նաև նպաստում է հոգեկան կայունությանը՝ նվազագույնի հասցնելով զգացմունքային լարվածության և ագրեսիվության աստիճանը:

Մարզադպրոցի ներկայացուցչի նկատառումը հավաստում է մեր դիտարկմանը:

*«Մարզադպրոցում պարապմունքները դրականորեն են ազդում երեխաների կամային և հոգեբանական որակների վրա: Կարևոր է ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ դժվարություններ հաղթահարելը, տարբեր ֆիզիկական վարժությունների և մարզախաղերի ժամանակ համատեղ գործողություններ իրականացնելը»:*

Մարզադպրոցի ներկայացուցիչ, Վարդենիս

Այն հարցին, թե ինչպես է ազդում մարզադպրոց հաճախելը ձեր առօրյա կյանքի որակի վրա, հարցվողների գերակշռող մասը պատասխանել է միանշանակ դրական *(տե՛ս աղյուսակ 13):*

**Գծապատկեր 13. Ձեր կարծիքով, ինչպես է ազդում մարզադպրոց հաճախելը ձեր առօրյա կյանքի որակի վրա**



Մարզադպրոցներում մարմնամարզական տարբեր մարզագործիքների վրա վարժություններ կատարելը, համատեղ վարժանքները նպաստում են սովորողների համարձակության, սեփական ուժերի նկատմամբ վստահության, ընկերասիրության, հաստատակամության, փոխօգնության, կարգապահության, համագործակցության դաստիարակմանը, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք են ձևավորում ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների նկատմամբ:

Մարզադպրոցների ներկայացուցչների ստորև ներկայացվող նկատառումները վերն ասվածի մասին են:

> *«Մարզադպրոցում պարապելը, ընկերներ ձեռք բերելը դրական ազդեցություն են ունենում երեխաների ինքնավստահության, համարձակության, կարգապահության, կամքի ուժի, փոխօգնության և համագործակցության հմտությունների ձևավորման գործում»:*

Մարզադպրոցի ներկայացուցիչ, Մարտունի

> *«Ֆիզիկական վարժությունները բարենպաստ ազդեցություն ունեն սովորողների հոգեկան վիճակի, արտաքին տեսքի, տրամադրության վրա»:*

Մարզադպրոցի ներկայացուցիչ, Գավառ

«Ինչպե՞ս կփոխվի ձեր կյանքը, եթե վաղվանից հնարավորություն չունենաք հաճախել մարզադպրոց» հարցին հարցվողների հիմնական մասը՝ 89 %-ը, նշել է, որ հավանաբար կփոխվի դեպի վատը, կունենա բացասական ազդեցություն, իսկ մնացած 11%-ը նշել է, որ հավանաբար ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա *(տե՛ս* աղյուսակ 15.): Հարցի պատասխաններն ակնհայտորեն հավաստում են, որ մարզադպրոց հաճախելն էական դեր ունի երեխաների կյանքում:



Հարցումներն ու մասնավոր շփումները վկայում են, որ սպորտով զբաղվող երեխան տարբերվում է իր ներդաշնակ զարգացմամբ, քանի որ սպորտը խթանում է կյանքի իրադարձությունների նկատմամբ դրական մոտեցումը, երեխաների մոտ զարգացնում է կարգապահություն, հաստատակամություն, էթիկետի պահպանում, հաջողության հասնելու անհրաժեշտ ջանքերի փոխկապակցման գիտակցում:

Այս համատեքստում մարզադպրոց հաճախող երեխային տրվող այն հարցին, թե ինչ տարբերություն կարող է նշել իր և մարզադպրոց չհաճախող իր ծանոթի միջև, հարցվողների կեսը պատասխանել է, որ տարբերություն առկա է, բայց դժվարանում է նշել, թե ինչպիսի: Հարցվողների 13%-ը նշել է, որ ավելի համարձակ են դարձել, 13%-ը նշել է, որ ավելի ուժեղ են դարձել, 10%-ը նշել է, որ ավելի շատ ընկերներ ունի, 6%-ը նշել է, որ դարձել է ավելի կոփված ու առողջ, և միայն 10%-ը տարբերություն չի նշել (տե՛ս աղյուսակ 15):

Գծապատկեր 15. Նշեք ձեր տարբերությունը մարզադպրոց չհաճախող ձեր ծանոթի համեմատ




Մարզադպրոցի և ընտանիքի միջև կապի հաստատումն ու ամրապնդումը, ավելին՝ ընդհանուր հետաքրքրությունների դեպքում՝ համագործակցությունը, շատ կարևոր են երեխայի լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում:

Մարզադպրոց-ընտանիք կապի և համագործակցության կայացման ու ամրապնդմանն առնչվող երեխաներին ուղղված այն հարցին, թե իրենց ծնողները հարցնու՞մ, հետաքրքրվու՞մ են մարզադպրոցի պարապմունքների, առօրյայի, հաջողությունների ու խնդիրների մասին, հարցվողների մեծամասնությունը (շուրջ 97 %) պատասխանել է դրական:

Ըստ մարզադպրոցների ներկայացուցիչների՝ նման համագործակցությունը կարևոր է երեխայի մոտիվացման, ինքնադրսևորման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման, հասակակիցների հետ ընդհանուր լեզու գտնելու և մեծ հաշվով՝ միջմարդկային արդյունավետ հարաբերությունների ձևավորման գործընթացներում: Այս համագործակցությունը շատ հաճախ կախված է ծնողների դիրքորոշումից, հետևապես մարզադպրոցները պետք է կարողանան աշխատանք իրականացնել ծնողների և երեխաների հետ միասնական նպատակներ ու դաստիարակչական խնդիրներ սահմանելու, ձգտումներ նշագծելու և համատեղ ուժերով դրանց լուծման ուղիները որոշելու հարցերում:

**2.3. Differences in healthy lifestyles and socialization of children attending and not attending sports schools**

The interviews conducted with the representatives of sports schools within the research framework revealed different opinions and understandings about the role of sports schools in the processes of children's socialization. All this becomes more vivid when we compare them with the answers to the surveys conducted with the sports school children.

Physical education and sports are among the factors that significantly impact the formation and development of a child's personality are physical education and sports. Attending sports school during adolescence strengthens children’s physical health and promotes mental stability by minimizing the sports level of emotional tension and aggression.

The remark of the representative of the sports school confirms our observation.

*"Training in sports has a positive effect on the voluntary and psychological qualities of children. It is possible to overcome difficulties during physical exercises, to perform joint actions during different physical exercises and sports. ”*

Representative of the sports school, Vardenis

When asked how attending a sports school affects the quality of your daily life, the vast majority of respondents answered unequivocally in the affirmative *(see Figure 13).*




Exercises on different sports equipment in sports schools and joint activities contribute to students' courage, self-confidence, friendship, perseverance, mutual help, discipline, cooperation, and a conscious attitude towards physical education classes.

The following are the considerations of the representatives of the sports schools.

*"Training in school and making friends have a positive effect on children's self-confidence, courage, discipline, willpower, mutual aid, and cooperation skills."*

Representative of the sports school, Martuni

*"Exercise has a positive effect on the mental state, appearance, and mood of students."*

Representative of the sports school, Gavar

To the question "How will your life change if you do not have the opportunity to attend sports school tomorrow?" the majority of respondents, 89%, indicated that it was likely to change for the worse, with a negative impact. In comparison, the remaining 11% indicated that no change was likely to occur *(see Figure 15).* The answers to the question prove that attending sports school plays an essential role in children's lives.

**Figure 14. "How will your life change if you do not have the opportunity to attend sports school tomorrow?"**




Surveys and private contacts show that a child involved in sports differs in his harmonious development. Sports promote a positive approach to life events and develop discipline, perseverance, etiquette, and success awareness.

In this context, when asked what difference can be made between a child attending a sports school and their acquaintance who does not attend a sports school, half of the respondents answered that there is a difference, but it is difficult to indicate what. 13% of the respondents mentioned that they have become more courageous, 13% said they have become stronger, 10% mentioned making more friends, 6% mentioned becoming more trained and healthy, and only 10% did not notice a difference *(see Figure 15)*.




Establishing and strengthening the connection between the sports school and the family, cooperation in case of common interests is very important in identifying and developing the best qualities and qualities of the child.

The majority of respondents (about 97%) answered positively to the question about the establishment and strengthening of school-family ties and cooperation, whether their parents are interested in sports school activities, daily life, successes, and problems.

According to the representatives of sports schools, such cooperation is essential in motivating the child's self-expression, overcoming obstacles and difficulties, finding common ground with peers, and, to a larger extent, forming effective interpersonal relationships. This cooperation often depends on the parents' position; therefore, the sports schools should work with the parents and children to set common goals and educational problems, mark aspirations, and jointly determine how to solve them.

# ՄԱՍ 3.
# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

# PART 3.
# CONCLUSIONS AND SUGGESTIONS

## ՄԱՍ 3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքում կարող ենք նշել հետևյալ եզրակացությունները, որոնք բովանդակային առումով ներառում են նաև զեկույցի 2.2-րդ կետում կատարված նկատառումները:

- Գեղարքունիքի մարզի համայնքային մարզադպրոցները գտնվում են քաղաքային համայնքների կենտրոնական մասերում: Մարզադպրոցներ հաճախում են հիմնականում քաղաքային բնակավայրերի երեխաները: Հարակից համայնքներից մարզադպրոցներ հաճախողների թվաքանակը համեմատաբար ցածր է:
- Հարակից գյուղերից մարզադպրոց հաճախելու հարցում մեծ նշանակություն ունեն ինչպես հանրային տրանսպորտով սպասարկվող ներմարզային երթուղիները, այնպես և դրանց սպասարկման ժամերն ու սակագները: Ներհամայնքային և ներմարզային հասարակական տրանսպորտային երթուղիները բավարար չեն գյուղերից դեպի մարզկենտրոն կամ մարզի մյուս քաղաքներ տեղաշարժի կազմակերպման համար: Կարելի է նշել, որ ներմարզային երթուղիների արդյունավետ սպասարկման արդյունքում գյուղական բնակավայրերից ավելի շատ երեխաներ են հաճախում Գավառի, Սևանի, Մարտունու մարզադպրոցներ:
- Մարզադպրոցների շենքերը հիմնականում հին են և խոնավ, ունեն կանոնավոր ջրամատակարարման և սանհանգույցների օդափոխության խնդիրներ: Մարզում հիմնանորոգվում է միայն Գավառի մարզադպրոցը:
- Մարզադպրոցներն ունեն մարզական գույքի, մասնավորապես աղջիկների համար նախատեսված մարզագույքի պակաս:
- արզադպրոցները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Որոշ մարզադպրոցների շենքեր, իրենց ճարտարապետական լուծումների առանձնահատկություններից ելնելով, նույնիսկ չունեն համապատասխան հարմարություններ հետագայում դրանցում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովելու համար: Շինություններում չկան թեքահարթակներ, լայն դռներ, թեև բոլոր մարզադպրոցներն ունեն երկրորդ հարկերում տեղակայված մարզադահլիճներ և մարզասրահներ: Դպրոցները չունեն նաև համապատասխան մարզագույք:

- Մարզադպրոցները չունեն լողավազաններ, ինչի արդյունքում լողը՝ որպես մարզաձև, ներառված չէ ուսուցանվող սպորտաձևերում:
- Մարզադպրոցներ հաճախող երեխաների ընդհանուր թվում շատ քիչ են աղջիկները:
- Երկար տարիներ մարզադպրոց հաճախող երեխաները, հասնելով կոնկրետ հաջողությունների, ստիպված են լքել իրենց համայնքը և մեկնել մայրաքաղաք՝ սպորտային կարիերան շարունակելու նպատակով:
- Թիմային մարզաձևերում զբաղվող երեխաների սոցիալականացման գործընթացն ավելի դյուրին է ընթանում, քան անհատական մարզաձևերում զբաղվողներինը:

Ելնելով կատարված եզրակացություններից՝ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները:

| № | Առաջարկություն | Ում է ուղղված |
|---|---|---|
| 1. | Առաջարկվում է քայլեր ձեռնարկել Գեղարքունիքի մարզի Վարդենիսի, Ճամբարակի, Մարտունու և Սևանի մարզադպրոցների շենքերի հիմնանորոգման ուղղությամբ, նվազագույնը՝ վերանորոգել սանհանգույցները, ապահովել ցնցուղարաններով՝ առաջնահերթությունը տալով Ճամբարակի մարզադպրոցին: | ՀՀ Կառավարություն<br>Գեղարքունիքի մարզպետարան<br>ՏԻՄ-եր |
| 2. | Մշակել համապատասխան ծրագիր՝ մարզադպրոցներում լող մարզաձևը առաջիկա 10 տարում ներառելու համար: Առաջարկվում է բոլոր մարզադպրոցներում լողավազանների կառուցում, որոնք ոչ միայն կծառայեն լող մարզաձևի դասավանդման համար, այլև լողավազանները կարող են ծառայել որպես լիցքաթափման միջոց ուժային մարզումներից հետո: | ՀՀ Կառավարություն |
| 3. | Ապահովել տրանսպորտային հասանելիություն մարզի հինգ քաղաքային համայնքների և նրանց հարակից բնակավայրերի ու համայնքների միջև: | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| 4. | Հանրակրթական դպրոցներում կազմակերպել ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի առավել հաճախակի մասնակցությունը ծնողական ժողովներին՝ քննարկելով երեխաների ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆիզիկական դաստիարակության հարցերը: Անհրաժեշտության դեպքում ծնողների հետ կազմակերպել անհատական հանդիպումներ: | ԿԳՍՄ նախարարություն<br>Հանրակրթական դպրոցներ |
| 5. | Մարզադպրոցների և հանրակրթական դպրոցի ֆիզիկական դաստիրակության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում ներառել թեմաներ՝ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության իրականացման շրջանակում դպրոցի և մարզադպրոցի համագործակցության վերաբերյալ: | ԿԳՍՄ նախարարություն |

| | | |
|---|---|---|
| 6. | Ակտիվացնել զանգվածային միջոցառումները (հանդիպումներ երեխաների և ծնողների հետ, առողջ ապրելակերպին նվիրված միջոցառումներ, սպորտային բաց մարզումներ և այլն), որոնք երեխաների մոտ կձևավորեն հստակ գիտակցական մոտեցում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի նկատմամբ, խթան կհանդիսանան նրանց ակտիվ սոցիալականացման համար: | Գեղարքունիքի մարզպետարան<br>ՏԻՄ-եր<br>Մարզադպրոցներ |
| 7. | Կազմակերպել մարզադպրոցների ներկայացուցիչների այցելություններ հանրակրթական դպրոցներ՝ երեխաների հետ հանդիպելու, իրենց աշխատանքները ներկայացնելու և նրանց մարզադպրոցներում ներգրավվելու համար: Նշված հանդիպումները ոչ միայն կնպաստեն մարզադպրոց-հանրակրթական դպրոց կապի ամրապնդմանը, այլև երեխաների շրջանում հետաքրքրություն կառաջացնեն «Ֆիզկուլտուրա» առարկայի նկատմամբ: | Գեղարքունիքի մարզպետարան<br>Հանրակրթական դպրոցեր<br>Մարզադպրոցներ |
| 8. | Մարզադպրոցներում աղջիկների ներգրավման նկատառումից ելնելով՝ անհրաժեշտ է մարզադպրոցներն ապահովել համապատասխան մարզական գույքով: | ՏԻՄ-եր |
| 9. | Մարզադպրոցներում պարբերաբար կազմակերպել ծնողական ժողովներ՝ նպաստելով մարզադպրոց-ընտանիք կապի ամրապնդմանը: | Մարզադպրոցներ |
| 10. | Մարզադպրոցներում ցանկալի կլիներ մարզումների շրջանակներում կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ (օրինակ՝ տեսաձայնագրել, լուսանկարել և տարածել համացանցում մարզումների ընթացքը) և այդ կերպ նպաստել սպորտի մասսայականացմանը՝ ազգաբնակչության մոտ ստեղծելով մոտիվացիա և հետաքրքրություն ակտիվ օգտվելու սպորտային բոլոր կարգի ծառայություններից: | Մարզադպրոցներ |
| 11. | Մարզադպրոցներում մարզչական գործունեություն իրականացնելիս պարտադիր կարևոր նշանակություն հատկացնել այն հանգամանքին, որ պարապմունքների ընթացքում դաստիարակվեն նաև միջանձնային հաղորդակցման հումանիստական գաղափարներ: | Մարզադպրոցներ |
| 12. | Անկախ այն հանգամանքից, թե մարզադպրոցի սանն անհատական մարզաձևերով է զբաղվում թե թիմային, անհրաժեշտ է պարբերական մասսայական միջոցառումներ իրականացնել՝ նպաստելու համար երեխաների սոցիալականացմանը: | Մարզադպրոցներ |
| 13. | Անհրաժեշտ է իրականացնել նախագծային և ճարտարապետական փոփոխություններ մարզադպրոցների շենքային պայմաններում, որոնք կնպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի համար նախատեսված հարմարությունների ներդրմանը շինությունների ներսում: | Մարզադպրոցներ |

## PART 3. CONCLUSIONS AND SUGGESTIONS

As a result of the research, we can conclude the following. (in terms of content, also included the considerations made in point 2.2 of the report)

- Community sports schools of the Gegharkunik region are located in the central parts of urban communities. Sports schools are attended mainly by children from urban areas. The number of people attending sports schools from neighboring communities is relatively low.
- Intra-regional routes for public transport and their service hours and tariffs are of great importance in attending sports schools from neighboring villages. Intra-community and intra-regional public transport routes are not sufficient to organize movement from villages to the regional center or other cities in the region. As a result of the effective maintenance of intra-regional routes, more children from rural areas attend sports schools in Gavar, Sevan, and Martuni.
- Sports school buildings are mostly old and damp, with problems with a regular water supply and ventilation of bathrooms. Only Gavar sports school is being renovated in the region.
- Sports schools lack sports equipment, especially for girls.
- Sports schools are not adapted for people with disabilities. Due to the peculiarities of their architectural solutions, some sports buildings do not even have adequate facilities to provide access and exit for people with disabilities in the future. There are no ramps or wide doors in the buildings, although all sports schools have gyms located on the second floor. Schools also do not have adequate sports equipment.
- Sports schools do not have swimming pools. As a result, swimming as a sport is not included in the sports list.
- There are very few girls among the total number of children attending sports schools.
- Children who have been attending sports for many years, having achieved concrete success, have to leave their community and go to the capital to pursue a sports career.
- The socialization process of children involved in team sports is more accessible than those involved in individual sports

Based on the conclusions made, the following suggestions are presented.

| № | Suggestions | To whom is it addressed? |
|---|---|---|
| **1.** | It is proposed to take steps to renovate the buildings of Vardenis, Chambarak, Martuni, and Sevan sports schools of Gegharkunik region, at least to renovate the bathrooms, to provide showers, giving priority to Chambarak sports school. | Government of the Republic of Armenia<br><br>Municipality of Gegharkunik Region<br><br>Local governments |

| | | |
|---|---|---|
| **2.** | Develop an appropriate program to include swimming in sports schools for the next ten years. It is recommended to build swimming pools in all sports schools, which will serve the teaching of swimming and can serve as a means of relaxation after strength training. | Government of the Republic of Armenia |
| **3.** | Provide transportation access between the five urban communities of the region and their adjacent settlements and communities. | RA Ministry of Territorial Administration and Infrastructure |
| **4.** | Organize more frequent participation of the physical education teacher in the parent-teacher meetings in the general education schools, discussing children's physical development, physical training, physical education. If necessary, arrange individual meetings with parents. | Ministry of ESCS<br><br>Secondary schools |
| **5.** | Include topics in the training of physical education teachers of sports schools and secondary schools on the cooperation between the school and the sports school within the framework of the implementation of the physical education of schoolchildren. | Ministry of ESCS |
| **6.** | Activate mass events (meetings with children and parents, events dedicated to a healthy lifestyle, open sports, etc.), which will form a clear conscious approach to physical education and healthy lifestyle in children, will be a stimulus for their active socialization. | Municipality of Gegharkunik Region<br><br>Local governments<br><br>Sports schools |
| **7.** | Organize visits by school representatives to public schools to meet with children, present their work, and involve them in sports schools. The mentioned meetings will not only strengthen the connection between the sports school and the public school but will also arouse children's interest in the subject of "Physical education. “ | Municipality of Gegharkunik Region<br><br>Secondary schools<br><br>Sports schools |
| **8.** | Due to girls’ involvement in sports schools, it is necessary to provide sports schools with appropriate sports equipment. | Local governments |
| **9.** | Organize regular parent-teacher meetings in sports schools to help strengthen the sports-family connection. | Sports schools |
